ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 756 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի N 530-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՀՎՀՀ՝ 07610657) կողմից կնքված՝ ստորև նշված եռակողմ պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի օգոստոսի 3-ի «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Բնապահպանական պայմանների բարելավում» ծրագրի մասին» N 530-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Փեյփր Հաուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00210346) 2023 թվականի օգոստոսի 25-ին կնքված՝ N ԿԲՀ-ԴԱՊ-ՄԱ-ԱՊՁԲ-23/08 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է A3 և A4 ֆորմատի թղթի ձեռքբերում՝ 130,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԳՍ Մոնիթորինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 06108225) 2023 թվականի սեպտեմբերի 8-ին կնքված՝ N ԿԲՀ-ԴԱՊ-ՄԱ-ԾՁԲ-23/01 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում փոխադրամիջոցների կառավարման հսկման արբանյակային GPS համակարգի տեղադրման և ամսական սպասարկման ծառայությունների մատուցում՝ 712,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

31.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ